ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 22.11.2019թ.
Ժամը 12^{00}

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԿՀՄՇՀ բաժնի գլխավոր մասնագետ Ն. Խաչիկյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/9» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Լ. Թազայան)

1.1 Քանի որ 18.11.2019թ.-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չուներ, ուստի գնահատող հանձնաժողովը մասնակցի տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան):

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով գնահատող հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.2 Հիմք ընդունելով վերը նշվածը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Ջերմգազշին» ՍՊԸ-ի տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար և որոշեց վերջինիս հայտարարել ընտրված մասնակից և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Լ. Թազայան

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-10/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11^{00}-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Մուրադյան

Գնահատող Ա. Պապյան

Գնահատող Ն. Խաչիկյան

Գնումները համակարգող Լ. Թազայան